ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/40

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի.

Մասնակցությամբ՝

Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչներ՝

Գ.Հուրոյանի (լիազորագիր տրված՝ 02.03.2020թ.),

Ն.Մուկուչյանի (լիազորագիր տրված՝ 02.03.2020թ.),

Ա.Ղազարյանի (լիազորագիր տրված՝ 02.03.2020թ.),

«Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Է.Չատինյանի (լիազորագիր տրված՝ 03.03.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2845-2020 գրությամբ «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 24.02.2020թ. թիվ 01/61-3463 գրության հիման, վրա 27.02.2020թ. թիվ 26/26-1/2845-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է առարկություն, որով Ընկերությունը հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 2019թ. հունիսի 10-ին կնքվել է կապալային աշխատանքների կատարման գնման թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 պայմանագիրը, 2019թ. հուլիսի 10-ին՝ թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 պայմանագիրը:

2020թ. փետրվարի 21-ին Երևանի քաղաքապետարանի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում՝ տեղեկագրում, հրապարակվել է պայմանագիրն միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցում, որով Պատվիրատուն միակողմանի լուծել է թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 և թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 պայմանագրերը:

Այնուհետև՝ 24.02.2020թ. Երևանի քաղաքապետարանը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարին և առաջարկել «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 և թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 պայմանագրերի շրջանակում «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունել է վարույթ:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի՝ Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ա. խախտել է

պայմանագրով նախատեսված … պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը …:

Վերը նշված հոդվածի տառացի մեկնաբանությունից և համակարգային վերլուծությունից հետևում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու հիմնական պայմանը՝ պայմանագրով նախատեսված պարտավորության խախտումն է, իսկ ածանցյալ պայմանը, կամ որ նույն է հետևանքը՝ պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծելու հանգամանքը:

«Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 2019թ. հունիսի 10-ին կնքվել է կապալային աշխատանքների կատարման գնման թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 պայմանագիրը:

Թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 պայմանագրի *1.3-րդ* կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2019թ. հոկտեմբերի 30-ը:

«Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 2019թ. հոկտեմբերի 30-ին կնքվել է 2019թ. հունիսի 10-ին կնքված թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, որի 1.1-րդ կետով սահմանվել է՝ Պայմանագրով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների կատարման վերջնաժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով:

Այսինքն՝ ստացվում է, որ թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 պայմանագրով նախատեսված հիմնանորոգման աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանվել է ***2019թ. նոյեմբեր 29-ը:***

Բացի այդ, «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 2019թ. հուլիսի 10-ին կնքվել է կապալային աշխատանքների կատարման գնման թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 պայմանագիրը:

Թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 պայմանագրի *1.3-րդ* կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2019թ. հոկտեմբերի 31-ը:

«Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 2019թ. հոկտեմբերի 30-ին կնքվել է 2019թ. հուլիսի 10-ին կնքված ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը, որի 1.1-րդ կետով սահմանվել է՝ Պայմանագրով նախատեսված Երևան քաղաքի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան 26 և 34 շենքերի համատեղ բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքների կատարման վերջնաժամկետը ավելացնել 30 օրացուցային օրով:

Այսինքն՝ թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 պայմանագրով նախատեսված հիմնանորոգման աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանվել է ***2019թ. նոյեմբեր 30-ը:***

2020թ. փետրվարի 21-ին Երևանի քաղաքապետարանի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում՝ տեղեկագրում, հրապարակվել է պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցում, որով Պատվիրատուն միակողմանի լուծել է թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 և թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 պայմանագրերը:

Որպես պայմանագրերը միակողմանի մասնակի լուծելու իրավական հիմք Պատվիրատուն նշել է պայմանագերի 3.1.4 կետի բ) ենթակետը, համաձայն որի՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը /ներառյալ օրացուցային գրաֆիկը/:

Այսինքն՝ ըստ Պատվիրատուի պայմանագրով նախատեսված պարտավորությունները կապալառուն խախտել է թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 պայմանագրի դեպքում՝ 2019թ. նոյեմբերի 30-ին, իսկ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 պայմանագրի դեպքում՝ 2019թ. դեկտեմբերի 1-ին:

Ստացվում է, որ Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով նախատեսված հիմնական պայմանը, կամ որ նույնն է պայմանագրով նախատեսված պարտավորության խախտման հանգամանքը ի հայտ է եկել թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 պայմանագրի դեպքում՝ 2019թ. նոյեմբերի 30-ին, իսկ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 պայմանագրի դեպքում՝ 2019թ. դեկտեմբերի 1-ին/:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու

օրվան հաջորդող **հինգ աշխատանքային օրվա** ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Տվյալ դեպքում օրենսդիրը հստակ սահմանել է ժամկետ՝ որոշակիացնելով պատվիրատուի գործողությունները, հակառակ պարագայում կստացվի, որ ցանկացած ժամանակ պատվիրատուն կարող է գրավոր կարգով դիմել լիազորված մարմնին՝ ներկայացնելով մասնակցի վերաբերյալ համապատասխան հիմքեր:

Սույն գործով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետով նախատեսված հիմքն, այն է՝ պայմանագրով նախատեսված պարտավորության խախտման հիմքը, ի հայտ է եկել թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 պայմանագրի դեպքում՝ 2019թ. նոյեմբերի 30-ին, իսկ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 պայմանագրի դեպքում՝ 2019թ. դեկտեմբերի 1-ին, հետևաբար պարտվիրատուն պարտավոր էր այդ հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող **հինգ աշխատանքային օրվա** ընթացքում «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի տվյալները ուղարկել լիազորված մարմնին՝ համապատասխանաբար օրենքով սահմանված կարգով լուծելով նաև պայմանագրերը:

Պատվիրատուն 21.02.2020 թվականին միակողմանի լուծել է պայմանագրերը, իսկ այնուհետև 24.02.2020 թվականին դիմել է ՀՀ ֆինանսների նախարարին և առաջարկել «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Վաղեմության ինստիտուտի կիրառումը, լինելով բողոքի, դիմումի, հայցի, ***մերժման մասին*** որոշում կայացնելու առումով ***բավարար հիմք***, իրենից ներկայացնում է լուրջ գործողություն, որը կիրառելի է ցանկացած փուլում: Այլ կերպ ասած, եթե նույնիսկ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքը վարույթն ընդունելիս չի նկատել առկա օրենսդրական խախտումը, ապա մասնակցի դիմումի հիման վրա պետք է կիրառի ՀՀ կառավարության 526-Ն որոշման 45-րդ կետով նախատեսված վաղեմության ժամկետները և մերժի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված ընթացակարգը, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարության իրավունքը արդեն իսկ դարձել է «մերկ իրավունք», ինչպես ասվում է հռոմեական իրավունքում ՝ «jus nudum»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՄԻԵԴ-ն իր կողմից կայացված վճռով նշել է, որ ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (տե՛ս, Ստաբբինգսը և մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 22083/93 22095/93 գանգատով ՄԻԵԴ 22.10.1996 թվականի վճիռը, պարբ. 51, 55):

Եվրոպական դատարանը Մինելին ընդդեմ Շվեցարիայի 25.03.1983թ. վճռի 76-րդ կետում նշել է. « ... 6-րդ հոդվածի 1-ին կետում **«Դատարան»** բառը պարտադիր չէ հասկանալ որպես օրենքի դասական ոճի դատարան՝ միակցված պետության ստանդարտ դատահիրավական ապարատին»:

Ընկերությունը եկել է այն եզրահանգման, որ սույն գործով կխախտվի «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի արդար դատական քննության իրավունքը, եթե ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անտեսի ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ սահմանված ժամկետային սահմանափակումը, եթե չապահովի իրավական որոշակիության երաշխավորումը, մասնակիցների պաշտպանությունը ժամկետանց դիմում-բողոքներից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը:

Ընկերությունը նշել է, որ նույնիսկ Դատարաններում, եթե հայցը ներկայացվել է հայցային վաղեմության ժամկետի խախտմամբ, ապա պատասխանողի դիմումի հիման

վրա, հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու գործի այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը: /Հիմք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 6-րդ մաս և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 9-րդ մաս/:

Ավելին, նույնիսկ այն դեպքերում, երբ անձը կատարել է իրավախախտում, սակայն 2 ամսվա ընթացքում պատասխանատվության չի ենթարկվել, ապա այլևս չի կարող ենթարկվել /Հիմք Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մաս/ կամ եթե նույնիսկ վարչական տույժ նշանակելու մասին որոշում է կայացվել , սակայն այն ի կատար չի ածվել կայացման օրվանից երեք ամսվա ընթացքում, ապա այլևս ենթակա չէ կատարման /Հիմք՝ Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 302-րդ հոդված/:

Այսինքն, ժամկետային սահմանափակման ինստիտուտը կարևոր է իրավունքի բոլոր ճյուղերում և ենթակա ավերապահ կիրառման:

Համաձայն ընկերության դիրքորոշման պատվիրատուն խախտել է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջը, ինչն էլ միաժամանակ հանգեցնում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված ընթացակարգի մերժմանը:

Ընկերությունը նշել է, որ նմանատիպ իրավական դիրքորոշում է հայտնվել 26.12.2019թ. թիվ ՍՑ-ՆԳ-2019/195 գործով կայացված որոշմամբ:

Համաձայն Ընկերության դիրքորոշման եթե Կապալառուն պայմանագրով նախատեսված էական պայմանը, մասնավորապես՝ ժամկետը ենթադրաբար խախտել էր համապատասխանաբար 2019թ. նոյեմբերի 30-ին և 2019թ. դեկտեմբերի 1-ին, ապա ինչ հիմնավորմամբ է պատվիրատուն դրսևորել անգործություն և պայմանագիրը միակողմանի լուծելու ծանուցումը հրապարակել միայն 21.02.2020թ, այսինքն շուրջ 3 ամիս հետո: Այդ քայլով պատավիրատուն ընդամենը արհեստական եղանակով փորձել է վերականգնել բաց թողնված ժամկետը, այնինչ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 12-րդ հոդվածը արգելում է Պատվիրատուին անհարկի չարաշահել իր իրավունքները:

Թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածով կողմերի միջև հաստատվել է օրացուցային գրաֆիկ, որով սահմանվել է

կապալուռուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումները և կատարման ժամկետը, ըստ որի՝

- Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Դավթյան 27 շենքի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքներ:
- Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Զարյան 17 շենքի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքներ:
- Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Զարյան 19 շենքի բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքներ:

Այնուհետև, թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածով կողմերի միջև հաստատվել է օրացուցային գրաֆիկ, որով սահմանվել է կապալուռուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումները և կատարման ժամկետը, ըստ որի՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան 26 և 34 շենքերի համատեղ բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքներ:

Թվով 2 պայմանագրերը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցման մեջ պատվիրատուն նշել է՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 ծածկագրով պայմանագիրը Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի 3 բակերի վերանորոգման մասով ՝ 17.970.000 ՀՀ դրամի փոխարեն կատարվել է 5.530.426 ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 12.439.574 ՀՀ դրամի չափով աշխատանքներ, ընդ որում

Ա. Դավթյան 27 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 4.950.000 ՀՀ դրամի չափով նախատեսված աշխատանքների փոխարեն կատարվել է 2.463.048 ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 2.486.952 ՀՀ դրամի աշխատանքներ:

Բ. Զարյան 17 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 6.510.000 ՀՀ դրամի փոխարեն կատարվել է 3.067.378 ՀՀ դրամի աշխատանքներ:

Գ. Զարյան 19 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 6.510.000 ՀՀ դրամ արժեքով աշխատանքները ընդհանրապես չեն կատարվել:

ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 ծածկագրով պայմանագիրը՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան 26 և 34 շենքերի համատեղ բակի տարածքի հիմնանորոգման մասով՝ 8.880.000 /ութ միլիոն ութ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամի

չափով նախատեսված աշխատանքների փոխարեն կատարվել է 4.507.453 ՀՀ դրամի չափով աշխատանքներ/»:

Ընկերությունը հայտնել է, որ պատվիրատուի կողմից ներկայացված տեղեկությունները անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 700-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կապալի պայմանագրով մի կողմը (կապալառուն) պարտավորվում է մյուս կողմի (պատվիրատուի) առաջադրանքով կատարել որոշակի աշխատանք և դրա արդյունքը սահմանված ժամկետում հանձնել պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

Թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 պայմանագրի 1.1-ի կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 պայմանագրի 1.1-ի կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան 26 և 34 շենքերի համատեղ բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 714-րդ հոդվածի 1-ին մասի՝ 1.Կապալառուն պարտավոր է պատվիրատուին անհապաղ նախազգուշացնել և մինչև նրանից ցուցում ստանալը **դադարեցնել աշխատանքը,** եթե հայտնաբերվել են՝

1) պատվիրատուի տրամադրած նյութերի, սարքավորումների, նախագծային փաստաթղթերի կամ մշակման (վերամշակման) հանձնված գույքի ոչ պիտանի կամ անպատշաճ որակի լինելը.

2) աշխատանքների կատարման եղանակների մասին պատվիրատուի ցուցումների իրագործման հետ կապված՝ նրա համար հնարավոր անբարենպաստ հետևանքներ.

3) կապալառուից անկախ այլ հանգամանքներ, որոնք սպառնում են կատարվող աշխատանքի արդյունքի պիտանիությանը և ամրությանը կամ անհնար են դարձնում դրանք ժամանակին ավարտելը:

Տվյալ դեպքում Կապալառու Ընկերությունը բազմիցս տեղեկացրել է Պատվիրատուին, որ վերջինիս կողմից տրամադրված «Կապիտալ փրոջեքթ» ՍՊԸ-ի և «Էմ-ՋԻ Դիզայն» ՍՊԸ-ի կազմած նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթում առկա են անհամապատասխանություններ, քանի որ ներկայացված են աշխատանքներ, որոնք փաստացի հնարավոր չէ կատարել: Այդ աշխատանքներից են օրինակ՝ Զարյան 17 հասցեում՝ մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում կամ Վ.Դավթյան 27 հասցեում՝ մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում/բակային տարածքում/ և այլն:

Համաձայն թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 և թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 պայմանագրերի 3.2.3 կետի՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար հատկացված տարածքը:

Ընկերությունը նշել է, որ վերը նշված պայմանի տառացի մեկնաբանությունից հաշվի առնելով նաև պայմանագրի հիմնական նպատակը, պարզ է դառնում, որ ոչ թե Պատվիրատուն պարտավոր է ուղղակի տարածք հատկացնել կապալառուին, այլ պարտավոր է հատկացնել այնպիսի տարածք, որտեղ աշխատանքները իրականացնելիս չեն լինի խոչընդոտներ, չեն խախտվի այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:

Սույն գործով Զարյան 19 հասցեում բնակիչները ամեն կերպ խոչընդոտել են աշխատանքների կատարմանը, ընդհուպ դիմել ՀՀ ոստիկանություն, գրությամբ դիմել Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին: Բնակիչների բողոքների արդյունքում Պատվիրատուի գիտությամբ և համաձայնությամբ որոշվել է չկատարել մի շարք աշխատանքներ, դրա փոխարեն ավելացել են նոր աշխատանքներ, սակայն աշխատաների չկատարման մեջ ընդհանրապես բացակայել է հայցվոր ընկերության մեղավորությունը:

Ավելին, բնակիչների կողմից աշխատանքների խոչընդոտումը դրսևորվել է նաև Զարյան 17 հասցեում, ու կրկին աշխատանքների մի մասը Պատվիրատուի ցուցումով փոփոխվել կամ դադարեցվել է: Առկա է նաև Զարյան 19-ի հասցեի /նախկին՝ Գրիբայեդով 1ա/ բնակիչների կողմից ներկայացված դիմումը ուղղված Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին, որոնցով վերջիններս խնդրել են ասֆալտապատել մեքենայի կայանատեղի և բարելավել ոռոքման ցանցը:

Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի գրությամբ բավարարվել է բնակիչների խնդրանքը և այդ աշխատանքները նույնպես Պատվիրատուի առաջադրանքով իրականացվել են Կապալառուի կողմից:

Այսինքն՝ Պատվիրատուի համաձայնությամբ իրականացվել են նաև աշխատանքներ, որոնք նախատեսված չեն եղել ծավալաթերթում, սակայն Պատվիրատուի հանձնարարությամբ փաստացի կատարվել են, և որն էլ հիմք է հանդիսացել մի շարք այլ աշխատանքերի կատարման ժամկետի հետաձգման:

Թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 պայմանագրի շրջանակում կողմերի միջև կնքվել է համադրման ակտ, որի արդյունքում բնականաբար փոփոխվել է կատարվելիք աշխատանքների ցանկը և նվազել է պայմանագրով նախատեսված գինը, սակայն անհասկանալի պատճառով պատվիրատուն նշել է, որ պայմանագրով նախատեսված գնից՝8.880.000 /ութ միլիոն ութ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամի աշխատանքներից կատարվել է միայն 4.507.453 ՀՀ դրամի չափով աշխատանքներ:

Նշել է նաև, որ այս բոլոր փաստերը անվիճելի են, քանի որ եթե նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթում առկա են եղել անհամապատասխանություններ, եթե կապալառուին չի տրամադրվել այնպիսի տարածք, որտեղ աշխատանքները իրականացնելիս չեն առաջանա խոչընդոտներ, եթե այդ տարածքում առկա են եղել աշխատանքներ, որոնք հնարավոր չի եղել կատարել, եթե բնակիչները անընդմեջ խոչընդոտել են աշխատանքների կատարմանը, դիմել են համապատասխան մարմիններին, ապա ի՞նչ հիմնավորմամբ կարող ենք խոսել, որ պայմանագրով նախատեսված ժամկետում աշխատանքները չկատարելու մեջ առկա է կապալառուի մեղքը:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի՝ Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու

համար պատասխանատու է **մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 367-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ հանդիպական է ճանաչվում կողմերից մեկի պարտավորության կատարումը, որը պայմանագրին համապատասխան, պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարմամբ:

2. Այն կողմը, որի վրա դրված է հանդիպական կատարումը, պարտավոր կողմի՝ պայմանագրով պայմանավորված պարտավորությունը սահմանված ժամկետում չկատարելու մասին ակնհայտորեն վկայող հանգամանքների առկայության դեպքում, իրավունք ունի կասեցնել իր պարտավորության կատարումը կամ հրաժարվել այն կատարելուց և պահանջել հատուցելու վնասները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 421-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պարտապանը կետանցող չի համարվում, քանի դեռ պարտավորությունը չի կարող կատարվել պարտատիրոջ կետանցի հետևանքով:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 423-րդ հոդվածի 1-ին մասի՝ Պարտատերը կետանցող է համարվում, եթե նա հրաժարվել է պարտապանի առաջարկած պատշաճ կատարումն ընդունելուց կամ չի կատարել օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով սահմանված կամ գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից բխող գործողություններ, որոնք չկատարելու դեպքում պարտապանը չէր կարող կատարել իր պարտավորությունը:

Այս փաստերի և իրավական նորմերի վերլուծության արդյունքում հայտնել է, որ կապալառուի աշխատանքների մի մասը չի կատարվել Պարտատիրոջ կողմից իր, հանդիպական պատրավորությունները չկատարելու ինչպես նաև այլ հանգամանքերի վրա հասնելու հետևանքով, որոնցում ընդհանրապես բացակայել է մասնակցի մեղքը:

Նշել է նաև, որ Զարյան 19 հասցեում իրականացվել են մի շարք աշխատանքներ, սակայն Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանման բաժնի կողմից B15 դասի բետոնի գնի մեխանիկական սխալի

պատճառով, որն ի դեպ անմիջապես ուղղվել և ներկայացվել է նոր ուղղված կատարողական թերթը, չի ընդունվել:

Ավելին, 2019թ. դեկտեմբերի 21-ին ներկայացվել է կատարողական թերթ, որը ստորագրվել է պատասխանողի կողմից, իսկ այնուհետև 23.12.2019թ. ներկայացվել է Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքերի հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրությունը, որը կրկին ստորագրվել է պատվիրատուի կողմից: Հաջորդիվ պատվիրատուն պատշաճ կարգով ստորագրել է նաև պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ թիվ 1 ակտը և 20.12.2019թ. կատարողական թիվ 1 ակտը:

Ընկերությունը հայտնել է, որ անհասկանալի պատճառներով Պատվիրատուն բացահայտ պատռել է իր ստորագրությունը և պայմանագիրը միակողմանի լուծելու ծանուցման մեջ նշել իբրև թե աշխատանքները չեն կատարվել: 25.12.2019թ. ARMEPS համակարգում պատվիրատուի կողմից հաստատվել և տրվել է դրական եզրակացություն՝ առ այն, որ տրվում է դրական եզրակացություն, անհամապատասխանությունները բացակայում են:

Այսինքն՝ ևս մի փաստ, որ աշխատանքների մի մասը կատարվել է, սակայն անհասկանալի պատճառով Պատվիրատուն դրանք չի ընդունել, իսկ այն աշխատանքներն էլ, որոնք չեն կատարվել, չեն կատարվել Պատվիրատուի, նախագծողի և այլ հանգամանքների հետևանքով, որոնցում ընդհանրապես բացակայել է կապալառուի մեղքը, իսկ ինչպես հայտնի է եթե չկա պատասխանատվություն առանց ՄԵՂՔԻ առկայության:

Այսինքն՝ Պատվիրատուն ոչ միայն թույլ է տվել ընթացակարգային, այլ նաև նյութական իրավունքի խախտումներ:

Ընկերությունը նշել նաև, որ իրավաչափ չէ նաև Պատվիրատուի պայմանագիրը միակողմանի լուծելու գործողությունը:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ պայմանագիրը կողմերից մեկի պահանջով կարող է փոփոխվել կամ **լուծվել դատարանի վճռով** միայն հետևյալ երեք դեպքերում՝

1. մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման առկայության դեպքում կամ

2. օրենքով նախատեսված դեպքում կամ

3. պայմանագրով նախատեսված դեպքում:

Ընդ որում որպես «ոսկե կանոն» օրենսդիրը սահմանել է, որ անկախ նրանից պայմանագրի լուծման համար հիմք է հանդիսանում պայմանագրի էական խախտումը, թե օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքը միևնույն է պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել միայն դատարանի վճռով:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0805/02/10 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ՝ մեկնաբանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասը, նշել է՝ Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի հիմքով հայցապահանջ ներկայացվելու դեպքում ապացուցման առարկան են կազմում պայմանագրի խախտման փաստը (կամ օրենքով նախատեսված դեպքը կամ պայմանագրով նախատեսված դեպքը), այդ խախտումը պայմանադիր կողմի կողմից կատարելը, խախտման արդյունքում վնասի առաջացումը: Նշված փաստերի հաստատումից բացի՝ դատարանի կողմից ինքնուրույն գնահատման են ենթակա խախտման էական լինելը և վնասի այնպիսին լինելը, որը պահանջ ներկայացրած կողմին զրկել է պայմանագրով ստացվող ակնկալիքից:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Կողմը կարող է պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել միայն պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց կամ այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, իսկ դրա բացակայության դեպքում՝ երեսնօրյա ժամկետում:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին.

Տվյալ դեպքում ՀՀ կառավարության 521-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանվել է, թե պատվիրատուն ինչպես պետք է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու ծանուցման մասին իրազեկի կապալառուին:

ՀՀ կառավարության 521-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրի միակողմանի լուծման մասով պատշաճ ծանուցում է համարվում տեղեկագրում պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակելու հաջորդ օրը:

2020թ. փետրվարի 21-ին Երևանի քաղաքապետարանի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում՝ տեղեկագրում, հրապարակվել է պայմանագիրն միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցում, որով պատվիրատուն միակողմանի լուծել է թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2 և թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1 պայմանագրերը:

26.02.2020թ. «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ն առարկություն է ներկայացրել Պատվիրատուին և նշել այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել պայմանագրով նախատեսված ժամկետների փոփոխման:

Սակայն, Երևանի քաղաքապետարանը՝ առանց սպասելու Կապալառու ընկերության դիրքոշմանը /ի դեպ կապալառուն իրավասու էր երեսնօրյա ժամկետում ներկայացնել դիրքորոշում/ արդեն 24.02.2020թ. դիմել է ՀՀ ֆինանսների նախարարին

և առաջարկել «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը: Այլ կերպ ասած ստացվում է, որ պատվիրատուն միակողմանի լուծել է պայմանագիրը առանց դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի՝ խախտելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

Համաձայն Ընկերության հայտնած դիրքորոշման՝ նշված փաստն արդեն իսկ բավարար է հաստատված համարելու, որ ոչ իրավաչափ է պայմանագրերով սահմանված ժամկետի խախտման հիմքով պայմանագրերը միակողմանի մասնակի լուծելու պատվիրատուի գործողությունը, քանի որ վերջինս պայմանագրերը միակողմանի լուծել է առանց դատարան դիմելու՝ անտեսելով նաև այն հանգամանքը որ կապալառուն պարտավորությունը մասամբ չի կատարել պատվիրատուի հանդիպական պարտավորությունների չկատարման, ինչպես նաև այնպիսի հանգամանքների ի հայտ գալու հետևանքով, որի մեջ բացակայում է հայցվորի մեղքը:

Պատվիրատուն պայմանագրերը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցման մեջ՝ շարադրելով, որ կապալառուն թույլ է տվել պայմանագրերով նախատեսված 1.3 կետով սահմանված ժամկետների խախտում, որպես պայմանագրերի միակողմանի լուծման հիմք նշել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը, որը սահմանել է ոչ թե պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքը, այլ պայմանագրից միակողմանի հրաժարվելու հիմքը:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքը ըստ որի՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 715-րդ հոդվածի՝ Պատվիրատուն իրավունք ունի մինչև աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ կապալառուին վճարելով մինչև պայմանագիրը կատարելուց պատվիրատուի հրաժարվելու վերաբերյալ ծանուցում ստանալու պահը կատարած աշխատանքին համարժեք գին, եթե այլ բան նախատեսված չէ կապալի

պայմանագրով: Պատվիրատուն պարտավոր է նաև հատուցել կապալի պայմանագրի դադարմամբ կապալառուին պատճառված վնասները՝ ամբողջ աշխատանքի համար սահմանված և կատարված աշխատանքի համար վճարված մասի գների տարբերության չափով:

Այսինքն՝ ի տարբերություն պայմանագիրը միակողմանի լուծելու ընթացակարգին, պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում պատվիրատուն ուղղակի դրսևորում է իր ցանկությունը, որը կախված չէ կապալառուի դրսևորած վարքագծի կամ թույլ տված կետանցի հետ:

Եթե կապալառուն թույլ է տվել պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, ապա կիրառելի է պայմանագիրը միակողմանի լուծելու կարգին վերաբերող դրույթները, իսկ եթե չկա նման խախտում և դա ընդամենը պատվիրատուի ցանկությունն է, ապա կիրառելի է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումից միակողմանի հրաժարվելու կարգին վերաբերող դրույթները:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 348-րդ հոդվածի՝ Պարտավորությունը կատարելուց միակողմ հրաժարվել և դրա պայմանները միակողմ փոփոխել չի թույլատրվում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Պարտավորությունը կատարելուց միակողմ հրաժարվելը՝ կապված դրա կողմերի ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ, … թույլատրվում է նաև պայմանագրով նախատեսված դեպքերում, եթե այլ բան չի բխում օրենքից կամ պարտավորության էությունից:

Տվյալ դեպքում ո՛չ Գնումների մասին ՀՀ օրենքը, ո՛չ ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշումը և ո՛չ էլ թվով 2 պայմանագրերը չեն սահմանում դրույթ, ըստ որի պատվիրատուն իրավասու է մինչև աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը ցանկացած ժամանակ միակողմ հրաժարվել պայմանագիրը կատարելուց:

Ավելին թվով 2 պայմանագրերի 3.1.4 կետերով, Գնումների մասին ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ սահմանվել է, որ կապալառուի կողմից պայմանագրով նախատեսված խախտումների դեպքում պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, այլ ոչ թե միակողմանի հրաժարվել պայմանագրից,

ինչպես սույն գործով պատվիրատուն նշել է ծանուցման մեջ՝ փորձելով խուսափել դատարան դիմելու օրենսդրությամբ սահմանված իմպերատիվ պահանջից:

Եթե պատվիրատուն ոչ թե պայմանագիրը միակողմանի լուծել է, այլ պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվել, ապա ստացվում է, որ նաև այս հիմքով է բացակայում Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջը, քանի որ խախտումը ինքին չի հանգեցրել պայմանագրի միակողմանի լուծմանը, այլ ըստ պատվիրատուի հանգեցրել է պայմանագրից միակողմանի հրաժարմանը:

Եթե պատվիրատուն միակողմանի հրաժարվել է պայմանագրից, ապա ստացվում է, որ վերջինիս գործողությունների նկատմամբ կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 715-րդ հոդվածով նախատեսված դրույթները, որն էլ իր հերթին պարտավորեցնում է պատվիրատուին հատուցել մինչև պայմանագիրը կատարելուց պատվիրատուի հրաժարվելու վերաբերյալ ծանուցում ստանալու պահը կատարած աշխատանքին համարժեք գինը:

Սույն գործով պատվիրատուն ոչ միայն չի հատուցել կատարած աշխատանքի համարժեք գինը, այլ նաև առանց դատարանի վճռի լուծել է պայմանագիրը և գրություն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ առաջարկելով «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը, ըստ որի՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նշել է, որ ո՛չ Գնումների մասին ՀՀ օրենքը և ո՛չ էլ ՀՀ կառավարության 524-Ն որոշումը չեն հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, քանի որ հստակ սահմանում են, որ եթե առկա է պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, ապա պատվիրատուն իրավասու է միակողմանի լուծել պայմանագիրը, սակայն վերստին չի նշվում պայմանագիրը միակողմանի լուծելու կարգ, քանի որ այդ կարգը արդեն իսկ սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, իսկ ինչպես հայտնի է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է նախ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից /որպես բարձր առավել

իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտ/ այնուհետև Գնումների մասին օրենքից և այլ իրավական ակտերից:

Այսինքն՝ պատվիրատուն օրենքի պահանջների խախտմամբ միակողմանի լուծել է պայմանագրերը, օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ դիմել է լիազորված մարմնին և կապալառուին վերագրել է պարտավորության խախտում՝ անտեսելով այն հանգմանքը, որ պայմանագրերով սահմանված ժամկետների կետանցի համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հանդիպական պարտավորությունների չկատարումը, ինչպես նաև կապալառուի մեղքի բացակայությամբ պայմանավորված կետանց:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառել այն:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի նկատմամբ նախաձեռնված ընթացակարգը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/40 ընթացակարգի շրջանակներում 03.03.2020թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, այնուհետև 09.03.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստին ներկայացել է Ընկերության լիազորված ներկայացուցիչ Է. Չատինյանը և միջնորդություն է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարի 06.02.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի» 17-րդ կետի համաձայն՝ շինարարական

փորձաքննություն նշանակելու և 10 օրացույցային օր տրամադրելու վերաբերյալ՝ պարտավորվելով նշված ժամկետը լրանալուն պես ներկայացնել փորձաքննության արդյունքները, որը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բավարարվել է:

25.03.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստին Ընկերության լիազորված ներկայացուցիչ Է. Չատինյանը պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.02.2020թ. թիվ 01/61-3463 գրությամբ հայտնել է հետևյալը՝

10.06.2019 թվականին կնքված «ԵՔ–ԲՄԱՇՁԲ–19/29-1» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետերի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Նշված պայմանագրով աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել՝ 30.10.2019 թվականը և օրենքի շրջանակում այն երկարաձգվել էր 30 օրով:

10.07.2019 թվականին կնքված «ԵՔ–ԲՄԱՇՁԲ–19/62-2» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետերի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան 26 և 34 շենքերի համատեղ բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ

Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Նշված պայմանագրով աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել՝ 31.10.2019 թվականը և օրենքի շրջանակում այն երկարաձգվել էր 30 օրով:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1» ծածկագրով պայմանագիրը՝ Երևանի Արաբկիր վարչական շրջանի թվով երեք բակերի հիմնանորոգման մասով՝ 17970000 /տասնյոթ միլիոն իննը հարյուր յոթանասուն հազար/ դրամի փոխարեն կատարվել է 5530426 /հինգ միլիոն հինգ հարյուր երեսուն հազար չորս հարյուր քսանվեց/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 12439574 /տասներկու միլիոն չորս հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր յոթանասունչորս/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ, ընդ որում.

ա. Դավթյան 27 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 4950000 /չորս միլիոն իննը հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով նախատեսված աշխատանքների փոխարեն կատարվել է 2463048 /երկու միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար քառասուութ/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 2486952 /երկու միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար իննը հարյուր հիսուներկու/ ՀՀ դրամի աշխատանքներ:

բ. Զարյան 17 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 6510000 /վեց միլիոն հինգ հարյուր տաս հազար/ դրամի փոխարեն կատարվել է 3067378 /երեք միլիոն վաթսունյոթ հազար երեք հարյուր յոթանասունութ/ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 3442622 /երեք միլիոն չորս հարյուր քառասուներկու հազար վեց հարյուր քսաներկու/ ՀՀ դրամի աշխատանքներ:

գ/ Զարյան 19 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 6510000 /վեց միլիոն հինգ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ արժեքով աշխատանքները ընդհանրապես չեն կատարվել:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2» ծածկագրով պայմանագիրը՝ Երևանի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան փողոցի թիվ 26-34 շենքերի համատեղ բակի հիմնանորոգման մասով՝ 8880000 /ութ միլիոն ութ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամի չափով նախատեսված աշխատանքների փոխարեն կատարվել է 4372547 /չորս միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամի չափով

աշխատանքներ, չեն կատարվել 4507453 /չորս միլիոն հինգ հարյուր յոթ հազար չորս հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվել է Ընկերության հետ կնքված վերը նշված աշխատանքների գնման պայմանագրերից՝ համապատասխանաբար համարելով դրանք մասնակի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/40 ընթացակարգի շրջանակներում 03.03.2020թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, որոնք պնդել են վերը նշված գրությամբ արտահայտված դիրքորոշումը:

4. ՍՑ-ՆԳ-2020/40 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/40 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի միջև 10.06.2019թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Երևանի քաղաքապետարանի և «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի միջև 10.07.2019թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան 26 և 34 շենքերի համատեղ բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

3. Պատվիրատուի կողմից 21.02.2020թ. www.procurement.am տեղեկագրում հրապարակվել են «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1» և «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2» ծածկագրերով պայմանագրերը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումները:

4. 09.03.2020թ. Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին միջնորդել է նշանակել սեփական միջոցների հաշվին շինարարական փորձաքննություն և պարտավորվել է 10 օրացույցային օրվա ընթացքում տրամադրել փորձաքննության արդյունքները, որը սակայն չի ներկայացվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2845-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 24.02.2020թ. թիվ 01/61-3463 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Երևանի քաղաքապետարանի և «Արամ-Շին» ՍՊԸ-ի միջև 10.06.2019թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի գինը սահմանվել է 17.970.000 ՀՀ դրամ:

Պայմանագրի Հավելված 2-ի՝ օրացույցային գրաֆիկի ժամանակացույցի համաձայն՝ Արաբկիր վարչական շրջանի Դավթյան 27 շենքի, Զարյան 17 շենքի և Զարյան 19 շենքի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2019 թվականի հոկտեմբերի 30-ը՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ երկարաձգվել է 30 օրացույցային օրով:

Երևանի քաղաքապետարանի և «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի միջև 10.07.2019թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան 26 և 34 շենքերի համատեղ բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի Հավելված 2-ի՝ օրացույցային գրաֆիկի ժամանակացույցի համաձայն՝ Արաբկիր վարչական շրջանի Բաբայան 26 և 34 շենքերի համատեղ բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2019 թվականի հոկտեմբերի 31-ը՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ երկարաձգվել է 30 օրացույցային օրով:

Երևանի քաղաքապետարանն Ընկերությանն ուղղված 21.02.2020թ. թիվ 01/61-3409 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի միջև 10.06.2019թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1», 10.07.2019թ.՝ թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2» ծածկագրերով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրերը, որոնց շրջանակներում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ այն է՝ թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1» պայմանագրի շրջանակներում Դավթյան 27 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 4.950.000 /չորս միլիոն իննը հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով նախատեսված աշխատանքների փոխարեն կատարվել է 2.463.048 /երկու միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար քառասուութ/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 2.486.952 /երկու միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար իննը հարյուր հիսուներկու/ ՀՀ դրամի աշխատանքներ, Զարյան 17 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 6.510.000 /վեց միլիոն հինգ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամի փոխարեն կատարվել է 3.067.378 /երեք միլիոն վաթսունյոթ հազար երեք հարյուր յոթանասունութ/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 3.442.622 /երեք միլիոն չորս հարյուր քառասուներկու հազար վեց հարյուր քսաներկու/ ՀՀ դրամի

աշխատանքներ, Զարյան 19 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 6.510.000 /վեց միլիոն հինգ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ արժեքով աշխատանքները ընդհանրապես չեն կատարվել, ինչպես նաև թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2» պայմանագրի շրջանակներում Երևանի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան փողոցի թիվ 26-34 շենքերի համատեղ բակի հիմնանորոգման մասով՝ 8.880.000 /ութ միլիոն ութ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամի չափով նախատեսված աշխատանքների փոխարեն կատարվել է 4.372.547 /չորս միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ, չեն կատարվել 4.507.453 /չորս միլիոն հինգ հարյուր յոթ հազար չորս հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ:

Ամփոփելով՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները և Պայմանագրերի 3.1.4-րդ կետի բ) ենթակետը Երևանի քաղաքապետարանը 2020թ. փետրվարի 21-ին միակողմանի մասնակի լուծել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1» և «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2» պայմանագրերը:

Պատվիրատուի կողմից 21.02.2020թ. www.procurement.am տեղեկագրում հրապարակվել են թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1» և «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2» ծածկագրերով պայմանագրերը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումները:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 3.1.4-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը):

Այսպիսով՝ «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ն իր և Երևանի քաղաքապետարանի միջև 10.06.2019թ. և 10.07.2019թ. կնքված պայմանագրերով ստանձնել է սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում, այն է՝ մինչև մի դեպքում 2019 թվականի հոկտեմբերի 30-ը, մյուս դեպքում՝ հոկտեմբերի 31-ը (կողմերի

փոխադարձ համաձայնությամբ երկարաձգվել է 30 օրացույցային օրով) Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան 26 և 34 շենքերի համատեղ բակային տարածքի հիմնանորոգման աշխատանքները կատարելու պարտականությունը: Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցման համաձայն՝ Ընկերությունը չի կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունն ամբողջ ծավալով և պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ՝ 21.02.2020թ., թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1» պայմանագրի շրջանակներում Դավթյան 27 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 4.950.000 /չորս միլիոն ինը հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով նախատեսված աշխատանքների փոխարեն կատարվել է 2.463.048 /երկու միլիոն չորս հարյուր վաթսուներեք հազար քառասուութ/ ՀՀ դրամի չափով, չի կատարել 2.486.952 /երկու միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար ինը հարյուր հիսուներկու/ ՀՀ դրամի աշխատանքներ, Զարյան 17 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 6.510.000 /վեց միլիոն հինգ հարյուր տաս հազար/ դրամի փոխարեն կատարել է 3.067.378 /երեք միլիոն վաթսունյոթ հազար երեք հարյուր յոթանասունութ/ՀՀ դրամի չափով, չի կատարել 3.442.622 /երեք միլիոն չորս հարյուր քառասուներկու հազար վեց հարյուր քսաներկու/ ՀՀ դրամի աշխատանքներ, Զարյան 19 շենքի բակի հիմնանորոգման համար պայմանագրով նախատեսված 6.510.000 /վեց միլիոն հինգ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ արժեքով աշխատանքները ընդհանրապես չի կատարել, ինչպես նաև թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2» պայմանագրի շրջանակներում Երևանի Արաբկիր վարչական շրջանի Բաբայան փողոցի թիվ 26-34 շենքերի համատեղ բակի հիմնանորոգման մասով՝ 8.880.000 /ութ միլիոն ութ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամի չափով նախատեսված աշխատանքների փոխարեն կատարել է 4.372.547 /չորս միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ, չի կատարել 4.507.453 /չորս միլիոն հինգ հարյուր յոթ հազար չորս հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ: Այսինքն՝ Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված առարկությամբ վկայակոչված փաստերին, հարկ եմ համարում նշել հետևալը.

Ընկերությունը վկայակոչել է Կարգի 45-րդ կետը և նշել, որ Պատվիրատուի կողմից խախտվել են նշված կետով սահմանված ժամկետները, այնինչ՝ Պատվիրատուն 21.02.2020 թվականին միակողմանի լուծել է Պայմանագրերը և 24.02.2020թ. դիմել ՀՀ ֆինանսների նախարարին՝ առաջարկելով «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը, այսինքն՝ Ընկերության այս դիտարկումը զուրկ է իրավական հիմնավորումից:

Ինչ վերաբերում է Ընկերության այն դիտարկմանը, որ պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել միայն դատարանի վճռով, հայտնում եմ, որ համաձայն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի՝ Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, **<u>եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով</u>**:

«Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի միջև 10.06.2019թ. կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29-1» և 10.07.2019թ.՝ թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/62-2» ծածկագրերով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրերի 3.1.4 կետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

<u>բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացույցային գրաֆիկը) ...:</u>

Տվյալ դեպքում Պայմնագրերով (ստորագրված են Ընկերության տնօրենի կողմից) հստակ նախատեսված են պայմանագրի լուծման հիմքերը, հետևաբար՝ արձանագրում եմ, ***որ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելը՝ դատարանի վճռի բացակայության պայմաններում, չի հակասում օրենքի պահանջներին:***

Իսկ ինչ վերաբերում է Ընկերության կողմից վկայակոչված այն հանգամանքին, որ որպես պայմանագրերի միակողմանի լուծման հիմք Պատվիրատուն նշել է ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը, որը սահմանել է ոչ թե պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքը, այլ պայմանագրից միակողմանի հրաժարվելու հիմքը, հարկ եմ նամարում նշել, որ Ընկերությունը հոդվածը մեկնաբանել է սխալ:

ՀՀ քաղաքացիական դատավարության 466-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, **<u>երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով</u> կամ կողմերի համաձայնությամբ, <u>պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված</u> կամ փոփոխված:**

Այսպիսով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պայմանների առկայության դեպքում, այն է՝ Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, **<u>եթե այլ բան նախատեսված չէ</u> օրենքով կամ <u>պայմանագրով</u>** , պահպանվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջը, այն է՝ **<u>երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով:</u>**

Վերը շարադրված իրավական նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ նման պայմաններում պայմանագրից հրաժարվելու դեպքում՝ պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված, այսինքն՝ Պատվիրատուի կողմից որպես Պայմանագրերի միակողմանի լուծման հիմք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը նշելը նույնպես չի հակասում օրենքի պահանջներին:

Ինչ վերաբերվում է առարկությամբ Ընկերության կողմից նշված այն պնդմանը, որ նմանատիպ իրավական դիրքորոշում հայտնվել է 26.12.2019թ. թիվ ՍՑ-ՆԳ-2019/195 գործով կայացված որոշմամբ, ապա հայտնում եմ, որ նման պնդումն անհիմն է, քանի որ թիվ ՍՑ-ՆԳ-2019/195 որոշմամբ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անդրադարձ է կատարել ոչ թե պայմանագրի լուծման ժամկետներին, այլ պատվիրատուի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով նախատեսված հիմքերը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու ժամկետներին:

Ամփոփելով վերը շարադրվածը, արձանագրում եմ, որ Ընկերության կողմից վկայակոչված փաստերը անհիմն են:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2845-2020 գրությամբ «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**